ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՑ 25-Ը ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Արմեն Սիմոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Շվեյցարիայի Համադաշնություն՝ Ժնև, 2022 թ. փետրվարի 23-25-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

2022 թ. փետրվարի 22-ից 25-ը Ներքին տրանսպորտի հարցերով կոմիտեի 84-րդ նստաշրջանին մասնակցելու հրավերը ստացվել է ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի քարտուղարության կողմից:

2022 թ. փետրվարի 24-ին Եվրոասիական տրանսպորտային կապերի զարգացմանը նվիրված կլոր սեղան-քննարկմանը մասնակցելու հրավերը ստացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներքին շուկաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների հարցերով նախարար, ԵԱՏՀ կոլեգիայի անդամ Վարոս Սիմոնյանի, ինչպես նաև ՌԴ տրանսպորտի նախարարի տեղակալ Դ.Ս. Զվերևի կողմից:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի՝ Ներքին տրանսպորտի հարցերով կոմիտեի 84-րդ նստաշրջանին, ինչպես նաև վերջինիս շրջանակներում կազմակերպվող Եվրասիական տնտեսական միության՝ Եվրո-ասիական տրանսպորտային կապերի զարգացման թեմայով կլոր սեղան-քննարկմանը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Հանդիպման ընթացքում ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից ներկայացվել են տրանսպորտի ոլորտում իրականացվող բարեփոխումների ծրագիրը, ինչպես նաև եվրասիական տնտեսական միջանցքների զարգացման ուղղությամբ տարվող քայլերը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի՝ Ներքին տրանսպորտի հարցերով կոմիտեի 84-րդ նստաշրջանի շրջանակներում կազմակերպվող Եվրասիական տնտեսական միության՝ Եվրո-ասիական տրանսպորտային կապերի զարգացման թեմայով կլոր սեղան-քննարկմանը ելույթով հանդես է եկել ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանը:

Երկկողմանի հանդիպում է տեղի ունեցել նաև ՄԱԿ-ի ԵՏՀ-ի գործադիր քարտուղար Օլգա Ալգաերովայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ճանապարհային

անվտանգությանը վերաբերող հարցեր, ինչպես նաև ՄԱԿ-ի՝ տրանսպորտի ոլորտում եղած կոնվենցիաներին Հայաստանի միանալու հարցը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումների արդյունքում ընդունվել է նախարարական բանաձևը, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել, որի համաձայն ՄԱԿ-ի ներքին տրանսպորտի կոմիտեն մասնագիտական աջակցություն կցուցաբերի հայկական կողմին տրանսպորտի ոլորտում մասնագիտական հմտությունների բարելավման ուղղությամբ: ՄԱԿ-ի ԵՏՀ-ի գործադիր քարտուղար Օլգա Ալգաերովան հանդիպման ընթացքում նաև նշել է, որ իրենք ճանապարհային անվտանգության հարցերի շրջանակներում դրամական աջակցություն կցուցաբերեն Հայաստանին: Քննարկվել է նաև Հայաստանի Հանրապետությանը լրացուցիչ աջակցություն ցուցաբերելու հարցը՝ ճանապարհային անվտանգության ռազմավարության մշակման համար:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպմանը հաջորդող փուլում ՄԱԿ-ի ԵՏՀ-ի գործադիր քարտուղար Օլգա Ալգաերովան պայմանավորվածության համաձայն մասնագիտական աջակցություն կտրամադրի հայկական կողմին՝ ճանապարհային անվտանգության ռազմավարություն մշակելու նպատակով:

Ա. Արմենյան